

«Թել Սել» ՓԲԸ տերմինալների միջոցով Դուք 24/7 ռեժիմով կարող եք իրականացնել.

Խնայողական, ընթացիկ հաշիվների համալրումներ
Քարտային հաշիվների համալրումներ Վարկի մարում.

ԱյԴի Բանկն իր հաճախորդներին առաջարկում է բանկային և քարտային հաշիվների համալրման, ինչպես նաև վարկերի մարման հարմարավետ և ժամանակակից եղանակ TelCell վճարային տերմինալների միջոցով:

Այսուհետ Դուք կարող եք TelCell վճարային տերմինալների միջոցով կատարել Ձեր բանկային և քարտային հաշիվների համալրումները, վարկերի մարումները՝ առանց Բանկ այցելելու՝ ժամանակի իրական ռեժիմում: Ծառայությունը հասանելի է շուրջօրյա TelCell ընկերության շուրջ 1 200 տերմինալների միջոցով՝ տեղակայված ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում:

**Արտարժույթով հաշիվների համալրման դեպքում տերմինալ մուտքագրված ՀՀ դրամով գումարը կփոխարկվի բանկային/քարտային հաշվին վերջինիս հաշվեգրման (քաղվածքում արտացոլման) պահին Բանկում անկանխիկ գործարքների համար գործող փոխարժեքով:**

| **Պայմաններ և սակագներ** | |
|---|---|
| Բանկային/քարտային հաշվի համալրման, վարկի մարման գումար[2] | մինչև 100.000 ՀՀ դրամ |
| Յուրաքանչյուր գործարքի դիմաց գանձվող միջնորդավճար | 300 ՀՀ դրամ |

[1] Եթե վճարման գումարը համալրման նվազագույն գումարից փոքր է, ապա վերջինիս ավտոմատ կուղղվի հաճախորդի բջջային հեռախոսահամարի հաշվեկշռի համալրմանը:
[2] Հաճախորդը կարող է իրականացնել 1-ից ավել գործարքներ:

Էջը թարմացվել է՝ 20.04.2021թ., 10:39